ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՄԵՎԱՆԻ ՎԱՉԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՆՈՐ ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 5-ին Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ դպրանոցի նոր մասնաշենքի բացման արարողությունը:

Հարմարավետ կացարաններով, դահլիճով և այլ ընդարձակ սրահներով եռահարկ մասնաշենքը կառուցվել է Հայ Եկեղեցու ազնիվ նվիրյալներ՝ դամասկոսաբնակ տեր և տիկին Գառնիկ և Անի Ցակուբյանների բարերարությամբ:

Բացման արարողությունից հետո շարականների երգեցողության ներքո ներկաներն ուղղվեցին դեպի նորակառույց շինության դահլիճ: Ողջունելով հյուրերին՝ նորանշանակ տեսչի պաշտոնակատար Տ. Մկրտիչ աբդ. Պողոշյանը, որ դպրանոցի շրջանավարտներից է, ճեմարանականների ու պաշտոնեության անունից իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին ու եկեղեցանվեր բարերարներին, որոնց հոգատար վերաբերմունքի շնորհիվ դպրանոցի սաներն այսուհետ իրենց ուսումը կշարունակեն էապես բարելավված պայմաններում:

Ներկաներին իր սրտի խոսքն ուղղեց նաև տիար Գառնիկ Ցակուբյանը՝ իր հարգանքն ու գնահատանքը հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին, որ առիթ ընձեռեց իրենց աջակցելու աստվածահաճո այս ձեռնարկին: «Հայ ազգի համար Հայ Եկեղեցին դարեր շարունակ եղել է հայ մշակույթի փարոսը, հայ ճարտարապետության ներշնչումն ու խորհուրդը, հայ մանրանկարչության և նկարչության շունչը և մանավանդ Հայ Եկեղեցին մշտապես եղել է ազգապահպանման հաստատությունը»,- նշեց տիար Ցակուբյանը՝ հույս հայտնելով, որ ստեղծված արդի հարմարավետ պայմանները լավագույնս կծառայեն եկեղեցականների նոր սերնդի պատրաստության ազնիվ գործին:

Հանդիսության ավարտին Հայրապետական օրհնության և գնահատանքի խոսքով ներկաներին դիմեց Նորին Սրբությունը: «Վստահ ենք, որ այս պայմանները նոր խրախույս պիտի լինեն մեր սաների համար, որպեսզի իրենք առավել ժրաջանությամբ նվիրվեն ուսման գործին, առավել նախանձախնդրությամբ կարողանան պատրաստել իրենց անձը հոգևոր սպասավորության նվիրական գործին»,- ասաց Վեհափառ Հայրապետն իր խոսքում՝ իր գնահատանքը հայտնելով Ցակուբյան ընտանիքին, ՀԲԸՄ անդամներին և բոլոր այն հայորդիներին, ովքեր իրենց գործունեությամբ մշտապես զորակցում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ, ՀԲԸՄ 83-րդ Համաշխարհային համաժողովի մասնակիցները, դպրանոցի պաշտոնեությունը, սաների ծնողները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԲԱՐՁՐ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ԳԱՌՆԻԿ ԵՎ ԱՆԻ ՅԱԿՈՒԲՅԱՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ
ՎԱՉԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԲԱՑՈՒՄԸ